ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—o—

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Հայ տառերի գիւտի և տպագրութեան յօբելեանների առիթով Խասավ-Իւրտ կայարանից (Վլադիկավկազ. գիծ) հոկտ. 16-ին կովկասեան փոխարքայից Թիֆլիսում ստացված է հետևեալ հեռագիրը.

Նորին սրբազնութիւն Մեսրոպ եպիսկոպոսին,

Շնորհաւորելով հայ տառերի գիւտի 1500-ամեայ կուլտուրական հանդիսաւոր տօնակատարութիւնը, կինս և ես սրտանց շնորհակալ ենք Ձեզանից և բոլոր ներկաներից՝ բարի ցանկութիւնների համար. Կոմս Վ.օրոնցով.

Այս հեռագիրը պատասխան է Մեսրոպ եպ.-ի քաշած հետևեալ հեռագրին.

«Լիվադիա.

«Նորին Կայսերական Մեծութեան Փոխարքային Կովկասում, Պայծառափայլ Կոմս Իլլարիոն Իվանովիչ Վ.օրոնցով-Դաշկովին.

«Այսօր, հայ գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի օրը, ի ներկայութեան Ձեր փոխանորդի՝ գեներալ Շատիլովի, իշխանութեան և զանազան դասնութիւնների հոգևորականութեան, բարձր ներկայացուցիչների, ինչպէս և հասարակական հիմնարկութիւնների ներկայացուցիչների և ժողովրդի բոլոր խաւերի բազմաթիւ ժողովի, կայացաւ հայոց հոգևոր դպրոցի նոր շինութեան մէջ համազգային յօբելեանի տօնախմբութիւնը և բազում կեանս մաղթվեց Պաշտելի Վեհապետին՝ հայկական կուլտուրայի Հովանաւորին և ամբողջ Արքայական Տան։ Կոմսուհի Ելիզավէտա Անդրէեվնայի և ձեր պայծառափայլութեան երկարակեցութեան մաղթանքը ընդունվեց բոլոր հաւաքվածների խնդագին աղաղակներով։ Մատուցանելով Ձեր Պայծառափայլութեան խորագոյն շնորհակալութեան զգացումներ այն անփոփոխ հովանաւորութեան համար, որ Դուք ցոյց էք տալիս հայ հասարակութեան բոլոր կուլտուրական-հոգևոր ձեռնարկութիւններին և վերառքելով աղօթք Ամենաբարձրեալին Ձեզ առողջութիւն և երկարակեցութիւն պարգևելու համար, ամենաանձնուիրաբար խընդրում եմ Ձերդ Պայծառափայլութիւնից արկանել յոտս Նորին Կայսերական Մեծութեան՝ հօտի և բոլոր հաւաքվածների անունից անսահման սիրոյ, անձնուիրութեան և երախտագիտութեան ամենահոգատակային զգացումը»։

—

Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարեհաճել է ուղար-

կել Թիֆլիսի նահանգական ազնուականութեան պարագլուխ Լշի. Աբխազիին հետեւեալ հեռագիրը՝ ի պատասխանի համազգային Մեծ Յոբելեանի ուղարկած շնորհաւորական հեռագրի. «Ընդունեցէք իմ շնորհակալութիւնը համակրական վերաբերմունքի և բարեմաղթութիւնների համար։ Օրհնում եմ ձեզ և Թիֆլիսի նահանգի ազնուականութեանը։ Գէորգ Կաթողիկոս Ամենայն Հայոց»։

—

Համազգային մեծ ուօնի հանդէսին Թիֆլիսում անկարող լինելով անձամբ ներկայ գտնվել, ուղարկել էին շնորհաւորական հեռագիրներ Մեսրոպ եպիսկոպոսի անունով նաև հետեւեալ պաշտօնական անձինք.—Կովկասեան շտաբի պետ գեն. Իւդենիչ, փոխարքայի խորհրդի անդամ գ. խ. Հակկէլ, փոխարքայի գիւանատան ընդհանուր գործերի վարող Դիմէրշչիկով և այլն։

—

Համազգային Մեծ Յոբելեանի մասին յօդուածներ և տեղեկութիւններ տպվեցին և դեռ տպվում են Ռուսաստանի համարեա բոլոր առաջադէմ օրաթերթերի և պարբերական հրատարակութիւնների մէջ։

—

Շաբաթ, հոկտ. 12-ին, Թիֆլիսի Նորաշէնի ս. Մարիամեան օր. դպրոցի սանուհիները, թւով մօտ 140 հոգի, մի հաճելի օր ունեցան։

Այդ օրը առաւօտեան նրանք խմբով առաջնորդվել էին եկեղեցի, որի աւարտումից յետոյ վերադարձան դպրոց, ուր, ճաշարանում, նրանց տեղան տրվեց, ներկայութեամբ դպրոցի հոգաբարձութեան և աշակերտական ճաշարանի վարչութեան։

Ճաշից յետոյ՝ իրիկնադէմին՝ աշակերտուհիները առաջնորդվեցին ուսումնարանի ընդարձակ սրահը, ուր նրանց համար սարքված էր մանկական սինեմատոգրաֆային ներկայացում մի քանի բաժիններով։

Սինեմատոգրաֆային ներկայացումից յետոյ՝ տեղի ունեցան աշակերտական երգեր ու պարեր, որոնք աւարտվեցին եր. ժամը 9-ին, և աշակերտուհիները ուրախ տրամադրութեան տակ ցրվեցին իրանց տները։